ՄԵՏԱՄՈԴԵՌՆԸ ՈՐՊԵՍ «ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՎԱՐՏԻ» ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ

ՌՈԶԱ ՆԵՄԻՇԱԼՅԱՆ

Ժամանակակից մարդը գիտական նորագույն նվաճումներով ամբողջությամբ վերափոխել է շրջապատող աշխարհը։ Բեկոնի ձևակերպած «գիտելիքը ուժ է» կարգախոսով առաջնորդվելով՝ մենք շարունակում ենք ավելացնել մեր ազդեցությունը և իշխանությունը բնության վրա՝ այն տանելով ստրկացման ու ոչնչացման։ (Եվ ուրեմն՝ ինչպիսին է այն աշխարհը, որտեղ մենք ապրում ենք)։ Քաղաքակրթության զարգացման ողջ ընթացքում հասարակության բնույթը, մարդկանց փոխազդեցությունները և արժեքային համակարգերը նկարագրելու համար օգտագործվել են տարբեր հարացույցներ, որոնց հիմքում ընկած է եղել հիմնականում տեխնոլոգիական դետերմինիզմը։ Տեխնոլոգիական առաջընթացը անկասկած, շարունակվելու է, սակայն մարդկությունն արդեն կարողացել է այդ քանակական-նյութական փոփոխվող աշխարհը ընկալել արագ ընթացքի մեջ, ինչը ստիպում է մեր ժամանակների էությունը բնութագրող հարացույցը ձևավորել այլ հիմքերի վրա։

2001 թվականի սեպտեմբերի 11-ի Նյու Յորքի ողբերգությունից հետո աշխարհը փոխվեց և փաստորեն սկսվեց մի նոր դարաշրջան, որտեղ հիմնարար փոփոխությունների են ենթարկվում նաև մարդու էության իմաստավորման մշակութային, սոցիալական, տնտեսական, քաղաքական, տեխնոլոգիական և այլ ոլորտների ընդհանուր ենթատեքստերը։ Հոլանդացի մտածողներ Թիմոթեուս Վերմյուլենը և Ռոբին վան դեն Ակկերը «Էսթետիկա և մշակույթ» ամսագրում (2010 թ.) հրապարակեցին «Գրառումներ մետամոդեռնի մասին»[1] հոդվածը, որտեղ ժամանակակից ճարտարապետությունը, արվեստը և մշակույթը վերլուծելիս օգտագործում են «մետամոդեռն» հասկացությունը՝ նկարագրելու համար այդ նոր իրավիճակը, որին հանգեցրեց հետմոդեռնը՝ հետարդիականությունը։ Հիշյալ հոդվածն ընդունված է համարել «մետամոդեռն» հասկացության կիրառման առաջին փորձերից մեկը, որտեղ հիմնականում խոսվում է արվեստի և մշակույթի ոլորտում տեղի ունեցող հիմնարար, արժեքային փոփոխությունների մասին՝ նշելով

[1] Տե՛ս http://www.emerymartin.net/FE503/Week10/Notes%20on%20Metamodernism.pdf ?fbclid=IwAR1KXlToxqssv8o_8Dm7TVninoj9nd6YRf3JdLTE0VzG96MmU0gHWNqgaxc, URL: http://www.lib.ru/FILOSOF/BEKON/nauka2.txt. https://www.kritika24.ru/page.php?id=39544 (դիտումը՝ 04.06.2019):

հետմոդեռնի և նոր հարացույցի սկզբունքային տարբերությունները: Հետմոդեռնի դարաշրջանն անսպասելի մոտեցավ իր ավարտին մի շարք գործընթացների պատճառով՝ կլիմայական փոփոխություններ, ֆինանսական ճգնաժամ, աշխարհի տարբեր մասերում տեղի ունեցող ահաբեկչություններ, թվային տեխնոլոգիական հեղափոխություն և այլն: Բայց որոշ մտածողներ համաձայն չեն, որ այդ ավարտը հանկարծակի էր, և կարծում են, որ դեռևս նախորդ դարաշրջանի վերջին տասնամյակում արդեն արձանագրվում էր՝ հետմոդեռնը «կարծես վերջանում է»[2]: Եթե վերլուծաբաններից շատերը հիմնականում համաձայն են հետմոդեռնի ավարտի հետ, ապա այն հարցում, թե դրան ինչ է հաջորդելու, և ինչպես ձևակերպել այդ նոր իրավիճակը, համաձայնություն դեռ չկա: Տարբեր մասնագետներ տարբեր եզրույթներ և բնորոշումներ են օգտագործում՝ ձևավորելու իրենց հիմնական մոտեցումները:

Հետազոտողների առաջին խումբը մետամոդեռնը գլխավորապես դիտարկում է մշակույթի և արվեստի համատեքստում: Օրինակ՝ ֆրանսիացի փիլիսոփա և սոցիոլոգ Ջիլ Լիպովեցկին օգտագործում է «հիպերմոդեռն» եզրույթը՝ նշելով, որ ժամանակակից մշակութային իրողություններն ու սոցիալական հարաբերությունները դարձել են այնքան անիմաստ (օրինակ՝ պատկանելությունը անցյալին կամ ապագային, այստեղին կամ այնտեղին և այլն), որ հարուցում են հեդոնիստական էքստազ և էկզիստենցիալ տառապանք[3]: Հետազոտողների երկրորդ խումբը մետամոդեռնը քննարկում է հասարակության հիմնական ոլորտների թվայնացման, նորագույն տեխնոլոգիաների տարածման համատեքստում: Փիլիսոփա Ալան Քիրբին նշում է, որ ժամանակակից հարացույցը բնորոշվում է որպես «դիջիմոդեռն» կամ «կեղծ մոդեռն»: Մշակութաբան Ռոբերտ Սամուելսը ժամանակակից իրականությունը նկարագրում է որպես «ավտոմոդեռն», որը ենթադրում է «մարդու և տեխնոլոգիական ինքնիշխանությունների» միջև փոխազդեցություն[4]: Նիկոլաս Բորիադուսը առաջարկում է «ալտերմոդեռնիզմ» եզրույթը, որը, ըստ նրա, մոդեռնի և հետգաղութային սոցիոմշակութային հարացույցի սինթեզի արդյունքն է[5]: Ըստ Բորիադուսի՝ զարգացող աշխարհն ընդլայնվում և ծավալվում է արևմտյան աշխարհի սահմաններից էլ այն կողմ, ինչի հետևանքով ձևավորվում է անհամաչափ զարգացող հասարակություններից բաղկացած աշխարհ, որտեղ արդիականացումը տարբեր մակարդակների վրա է, և ձևավորվում է կենտրոն չունեցող համաշխարհային կղզիների համա-

---

[2] **L. Hutcheon**, The Politics of Postmodernism (New York/London: Routledge, 2002), p. 656.

[3] Տե՛ս **G. Lipovetsky**, Hypermodern Times (Cambridge: Polity Press, 2005)., էջ 79:

[4] Տե՛ս **R. Samuels**, 'Auto-Modernity after Postmodernism: Autonomy and Automation in Culture, Technology, and Education', in Digital Youth, Innovation, and the Unexpected, ed. T. Mcpherson (Cambridge, MA: The MIT Press, 2008), էջ 219:

[5] Տե՛ս **N. Bourriaud**, ed. Altermodern. Tate Triennal 2009 (London: Tate Publishing, 2009), էջ 12:

կարգ, որտեղ գերիշխում են էսթետիկականն ու անկեղծությունը:

Ռուս փիլիսոփա և մշակութաբան Էպշտեյնը գրում է. «Վերլուծելով ժամանակակից առաջատար հեղինակների աշխատությունները՝ կարելի է եզրակացնել հետհետմոդեռնը կավետի ինքնակազմակերպվող վիրտուալ համակարգերի՝ (համացանց-համահեղինակություն (Վիկիպեդիա), ինքնակրթություն, անցյալի հանդեպ հետաքրքրության և ապագայի հանդեպ բաց լինելու համադրում, նուրբ էսթետիկ արժեքներ, անդրանձնական, այնկողմնային միտվածություն, տիպականացված և նորմավորված բարոյականությունից հրաժարում՝ հօգուտ ստեղծագործական բարոյականության) բացարձակ հաղթանակը: Ինչպես մետաֆիզիկան ֆիզիկայից այն կողմ վերզգայական հիմքերի մասին փիլիսոփայական ուսմունքն է, որը մտածողության և աշխարհընկալման անցում է դեպի նոր որակ, այնպես էլ մետամոդեռնը կարող է դուրս գալ ֆիզիկական փորձի սահմաններից այն կողմ, դեպի անդրանձնականը՝ վերածվելով ազատության և անձնային հոգևոր որոնումների մի նոր տեսակի կրոնի»[6]:

Երրորդ խումբ հեղինակները մետամոդեռնը դիտարկում են տնտեսական ոլորտի և կապիտալիստական ռեալիզմի համատեքստում: Բրիտանացի փիլիսոփա և տնտեսագետ Մարկ Ֆիշերը օգտագործում է Ֆրեդերիկ Ջեյմսոնի և Սլավոյ Ժիժեկի հայտնի արտահայտությունը. «Ավելի հեշտ է պատկերացնել աշխարհի վերջը, քան թե կապիտալիզմի»: Նա գտնում է, որ կապիտալիզմը ոչ միայն քաղաքական և տնտեսական միակ կենսունակ համակարգն է, այլ նաև չունի որևէ այլընտրանք: Ֆիշերը բարձրացնում է շատերին անհանգստացնող մի հարց՝ ինչքան կարող է գոյատևել մշակույթը, եթե նոր ոչինչ չի ծնվելու: Ապագայում մենք ունենալու ենք միայն կրկնություն և խեղաթյուրված վերարտադրություն: Այն մշակույթը, որը միայն պահպանում է անցյալը, մշակույթ չէ: Ֆիշերը վերլուծում է անպտղության գաղափարը՝ օրինակ բերելով Պիկասոյի «Գերնիկա» կտավը, որը ֆաշիստական վայրագությունների առաջացրած սարսափի ճիչն ու զայրույթն էր արտացոլում: Ապագայում կտավը կորցնելու է իր ենթատեքստը և գործառույթը, քանի որ եթե նոր ընկալողներ ու տեսնողներ չկան, մշակութային օբյեկտը կորցնում է իր ուժը՝ վերածվելով թանգարանային նմուշի[7]: Կապիտալիստական ռեալիզմի ուժը որոշվում է այն բանով, թե ինչքանով է կարողանում յուրացնել և սպառել նախորդ ողջ պատմությունը, ցանկացած մշակութային օբյեկտի (լինի սրբապատկեր, պոռնոգրաֆիա թե «Կապիտալը») տալ որոշակի ֆինանսական արժևորում: Հին մշակույթների հավատալիքները ենթարկվում են օբյեկտիվացված հեգնանքի, առարկայացման, ծիսակարգերը վերափոխ-

---

[6] Մեջբերումն ըստ **N. Bourriaud,** նշվ. աշխ., էջ 56:

[7] Տե՛ս **Mark Fisher**, “Capitalist realism. Is there no alternative?” John Hunt Publishing, Winchester,Washington, 2009, էջ 45:

վում են էսթետիկական օբյեկտների։ Ֆիշերը գտնում է, որ կապիտալիստական ռեալիզմը այն է, ինչի հասավ սպառող-դիտորդը, երբ հավատալիքները դարձան ընդամենը նշաններ ու ծիսակարգեր։ Տեղի ունեցավ անցում հավատից էսթետիկային, որը հենց կապիտալիստական ռեալիզմի գլխավոր հատկանիշն է։ Կապիտալը կարիք ունի անվերջ ընդլայնվող շուկայի, որը սկզբունքորեն հակասում է կայունության գաղափարին։

Կապիտալիստական ռեալիզմը ամենուր ներթափանցող երևույթ է, որը կարգավորում է ոչ միայն մշակութային արտադրությունը, այլ նաև աշխատանքը և կրթությունը։ Այնպիսի երևույթներ, ինչպիսիք են սովը, աղքատությունը, պատերազմը, ներկայացվում են որպես իրականության անբաժան մաս, իսկ դրանց վերացման ցանկացած փորձ դիտվում է որպես ուտոպիա։ Վերջին մի քանի տասնամյակներին կապիտալիստական ռեալիզմը ձևավորեց «բիզնես-գոյաբանություն», պարզ դարձավ, որ հասարակության բոլոր ոլորտները, այդ թվում նաև առողջապահությունն ու կրթությունը, ղեկավարվում և կարգավորվում են շուկայի օրենքներով։ Ինչպես նշում են որոշ մտածողներ (Բրեխտ, Ֆուկո, Բադյու), ազատագրման քաղաքականությունը պետք է ոչնչացնի «բնական կարգի» թվացյալ գաղափարը, պետք է ապացուցի, որ այն, ինչ թվում է անհրաժեշտ ու անխուսափելի, ընդամենը էմպիրիկ պատահականություն է։ Այդ քաղաքականությունը պետք է այնպես անի, որ անհնարինության դատապարտվածը ներկայացվի որպես հնարավոր։ Եվ հակառակը, այն, ինչ միշտ համարվել է ավելի քան հնարավոր, հիմա համարվի անհնար։

Ժամանակակից ֆրանսիացի փիլիսոփա Ալան Բադյուն գրում է. «Կապիտալիստական ռեալիզմի պայմաններում պահպանվում է անհավասարությունը, ցանկացած իրողություն ֆինանսական չափում է ստանում, և այդ ամենը ներկայացվում է որպես կատարելություն։ Ստեղծված կարգի կողմնակիցները, որպես արդարացում իրենց պահպանողականության, չեն կարող այն համարել կատարյալ։ Դրա փոխարեն նրանք նշում են, որ մնացած ամեն ինչ սարսափելի է. միգուցե մենք չենք ապրում կատարյալ Բարիքի պայմաններում, սակայն լավ է գոնե Չարիքի պայմաններում չենք ապրում։ Մեր ժողովրդավարությունը անթերի չէ։ Բայց այն ավելի լավն է, քան արյունոտ բռնապետությունը։ Կապիտալիզմը անարդար է, բայց բռնապետություն չէ»[8]։

Ժամանակակից բրիտանացի նկարիչ Լյուկ Տերները 2011 թվականին հրատարակեց «Մետամոդեռնի մանիֆեստը»[9], որտեղ հռչակեց նոր աշխարհընկալման հիմնական բնութագրիչները։ Ի տարբերություն մոդեռնի «գաղափարական միամտությանը» և հետմոդեռնի «հեգնող կեղծությանը», մետամոդեռնը առաջարկում է անվերջ տատանում «ստի և

[8] http://rumagic.com/ru zar/sci philosophy/badyu/0/j3.html (դիտումը՝ 28.06.2019)։
[9] Տե՛ս http://eroskosmos.org/metamodernist-manifesto/ (դիտումը՝ 28.06.2019)։

ազնվության, միամտության և խորամանկության, հարաբերապաշտության և բացարձակ ճշմարտության, անթիվ ցաքուցրիվ հորիզոններիի» միջև։ Մյուս կողմից՝ եթե պոստմոդեռնը բնորոշվում էր այնպիսի հատկանիշներով, ինչպիսիք են ապակառուցողականությունը, հեգնանքը, հարաբերապաշտությունը, նիհիլիզմը, ընդհանուր գաղափարներից հրաժարումը, ապա մետամոդեռնը, ըստ Տերների, վերադարձ է դեպի անկեղծությունը, հույսը, ռոմանտիզմը, ընդհանուր գաղափարներն ու բացարձակ ճշմարտությունները։ Սակայն այդ վերադարձն ինքնին տատանում է մոդեռնի և հետմոդեռնի միջև։ Մետամոդեռնի սերունդը գիտակցում է, որ կարելի է միաժամանակ և՛ հեգնել, և՛ լինել անկեղծ, մեկը մյուսին այլևս չի բացառում։ Տերների «Մետամոդեռնիզմ. համառոտ ներածություն»[10] հոդվածում շարադրվում է մետամոդեռնի մանիֆեստը.

1. Մենք ընդունում ենք, որ տատանումն աշխարհի բնական կարգն է։

2. Մենք պետք է ազատվենք մոդեռնի հարյուրամյա գաղափարական միամտությունից և կեղծ հեգնանքից, ինչպես նաև դրա ապօրինի զավակից (հետմոդեռնից)։

3. Շարժումը պետք է ընթանա հակադիր գաղափարների միջև տատանումների ձևով, այդ հակադրությունները աշխարհը շարժման մեջ դնող հսկայական էլեկտրական մեքենայի բաբախող բևեռներն են։

4. Ցանկացած շարժմանն ու ընկալմանը բնորոշ են սահմանափակումներ, ու դրանցից ազատվելու որևէ փորձ ապարդյուն է։ Համակարգի անկապտելի անավարտության հետևանք է կողմնակցությունը, բայց ոչ թե հանուն ընթացքին անխոս հնազանդության, այլ ավելի շուտ հանուն ինչ-որ թաքնված կողմ պատահաբար տեսնելու հնարավորության։

5. Կեցությունն ընթանում է անդարձելի անկման՝ առավելագույն էնտրոպայի անհամատեղելիության վիճակի։ Գեղարվեստական գործը հնարավոր է միայն այն դեպքում, երբ ծնվում է այդ անհամատեղելիությունից կամ բացահայտում է այն։

6. Ներկան անհետաձգելիության և մարման երկակի ծննդի ախտանիշ է։ Այսօր մենք հավասարապես տրված ենք ճակատագրապաշտությանը և անցյալը կարոտով վերհիշելուն։ Նոր տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս իրադարձությունները միաժամանակ ընկալելու ու խաղարկելու բազում դիրքերից։

7. Այնպես, ինչպես գիտությունը ձգտում է լիրիկական նրբաճաշակության, արվեստագետները փնտրում են ճշմարտությունը։ Ողջ տեղեկատվությունը գիտելիքի հիմքն է՝ թե՛ էմպիրիկ, թե՛ այլաբանական ոճի՝ անկախ դրա ճշմարտացիությունից։ Մենք պետք է ընդունենք

[10] Տե՛ս նույն տեղը։

կախարդական ռեալիզմի գիտական-լիրիկական համադրությունը և տեղեկատվական միամտությունը: Սխալը ծնում է իմաստ:

8. Մենք առաջարկում ենք պրագմատիստական ռոմանտիզմ, որը չունի գաղափարական ավանդույթներ: Այսպիսով, մետամոդեռնը պետք է սահմանել որպես հեգնանքի և անկեղծության, լավատեսության ու կասկածի միջև և անդին փոփոխական իրավիճակ, բազմաթիվ անհամատեղելի հորիզոնների փնտրտուք: Մենք պետք է առաջ շարժվենք և տատանվենք:

Փիլիսոփա, պատմաբան և սոցիոլոգ Հանս Ֆրեինաչտը 2017 թվականին հրատարակեց «Լսող հասարակություն» գիրքը, որտեղ ներկայացնում է այն իրողությունը, որ 20-րդ դարի մեծ մասը բնութագրվում է որպես մոդեռնի ժամանակաշրջան: Մոդեռնը այստեղ ընդհանրական հասկացություն է, որն ընդգրկում է քաղաքակրթության զարգացման գագաթնակետ համարվող համընդհանուր պրագմատիզմն ու ռացիոնալությունը: Մարդկությունը արդյունաբերական դարաշրջանից և ազգային պետություններից անցավ տեղեկատվական դարաշրջան՝ համաշխարհային հետարդյունաբերական շուկայով, և հարց առաջացավ, թե ապագայում ինչպիսի հասարակություն է ձևավորվելու և փոխարինելու ազատական ժողովրդավարությանը, որը հավասարակշռում է կապիտալիզմը և բարեկեցիկ պետությունը: Հանսը գտնում է, որ քաղաքակրթությունը հասել է մոդեռնի սահմաններին և այժմ անցում է կատարում մետամոդեռնին: Ապագայի մետամոդեռնիստական հասարակությունը նա համարում է որպես «լսող» հասարակություն, որը ավելի զգայուն և ուշադիր է անհատի ներքին չափումների հանդեպ: Հեղինակը ցույց է տալիս, թե ինչպես կարելի է անհատի հոգեբանական աճն ու զարգացումը «լսելով»՝ հասկանալ համաշխարհային հասարակության զարգացումն ու անցումը համացանցի դարաշրջանի: «Մետամոդեռնիստները սահմանում են իրենց արժեքային մեմերը ներքին պայքարի միջոցով: Այստեղ կարևոր չէ՝ դու Ճիշտ ես, թե Սխալ, այստեղ կարևոր է, թե որքան բարդ է քո մտածողությունը»[11]: «Արժեքային մեմեր» հասկացությունը օգտագործվում է ժամանակակից հեղինակների և հատկապես մետամոդեռնի ներկայացուցիչների կողմից և արտահայտում է մարդու սեփական ինքնության, հասարակության և կեցության ընդհանուր ըմբռնումը: «Մեմերը» արժեքային մոտեցում են սահմանում հասարակության զարգացման տվյալ փուլի շրջանակներում: Մոդեռնի արժեքային մեմը լուսավորականության արժևորումն ու տարածումն էր աշխարհով մեկ: Այն հակադրվեց և մերժեց նախորդ արժեքային մեմը (հետֆաուստյան), որը արտահայտում էր կրոնական արժևորումներ: Փրկության գաղափարն այլևս չուներ այն տարածումը և ազդեցությունը, ինչն ունեին մոդեռնի՝ հավասարության, բանակա-

[11] **Hanzi Freinacht**, “The Listening Society: A metamodern guide to politics”, Copyright C Metamoderna Aps, 2017, p. 256.

նության, անհատականության գաղափարները։ Նման մեխանիզմով հետմոդեռնի մեմերը գրավեցին մարդկանց գիտակցությունը և սրտերը՝ արժևորելով օտարվածության, անհավասարության, ապակառուցողականության, հարաբերապաշտության գաղափարները։ Մետամոդեռնի մեմերը արտահայտում են համաշխարհայնացման գործընթացի հետևանքով ձևավորված հակասություններն ու փոխազդեցությունները։ Յուրաքանչյուր նոր մեմ պարունակում է որոշակի նոր արժեքներ, օրինակ՝ մոդեռնի ներկայացուցիչները տարանջատում էին եկեղեցին, պետությունը ու գիտությունը և ընդունում էին բաց ու ազնիվ մրցակցությունը։ Դա մոդեռնի արժեքային մեմն էր։ Հետմոդեռնը արժևորում էր պատմական և ժամանակակից սխալների գոյությունը։ Իսկ ժամանակակից աշխարհում արժեքային մեմերը միաժամանակ գոյություն ունեն և պայքար են մղում մարդկանց գիտակցության ու սրտերի համար։

Հանսը առաջարկում է մարդկության զարգացման չորս մոդել՝

- հիերարխիկ, որը բարդ գաղափարները հասկանալու և դրանք կիրառելու տարանջատման մեթոդ է,
- նշանների տիրույթների մոդել կամ իրականության ընկալման ժամանակակից «կոդ», որը բացատրում է, թե որքան խորն է իրականության ընկալումը ներկայումս։ Օրինակ՝ Արիստոտելի տիպի մտածողը կարող է ունենալ արտառոց ընկալումներ, սակայն պատկերացում չունենա ժամանակակից ֆիզիկայից, և բարձրագույն կրթություն ունեցող երիտասարդը նրան կարող է շատ բան սովորեցնել։ Ինչո՞ւ։ Քանի որ Արիստոտելին բախտ է վիճակվել ծնվել 2400 տարի առաջ և ստիպված է եղել ինքնուրույն տքնել ու բացահայտել այն բարդ ճշմարտությունները, որոնք ժամանակակից երիտասարդին պարզապես տրված են,
- զգացմունքային մոդել, որը բացատրում է, թե ընկալողը որքանով է երջանիկ կամ դժբախտ,
- զգացմունքային խորության մոդել, որը բացահայտում է, թե որքան խորը զգացմունքային փորձ ունի ընկալողը իր հասկացութային ապարատում. ինչքան խորը զգայական շերտեր կարող է ներթափանցել, այնքան ավելի խորն է նրա յուրաքանչյուր հաջորդ ընկալումը։

«Մետա» մասնիկը ոչ թե նախածանց է, այլ Պլատոնի օգտագործած հունարեն «metaxis»[12] եզրն է, որը նշանակում է հակադիր բևեռների միջև շարժում, մարդու իրավիճակի կառուցվածքային բնութագրիչ։ Մարդը լողում է հակադրությունների օվկիանոսում (մեկը և բազմությունը, հավերժությունը և ժամանակը, ազատությունը և ճակատագիրը, բնազդը և բանականությունը, ապահովությունը և ռիսկը, սերը և ատելությունը և այլն)։ Վերադառնանք մոդեռնի դարաշրջանի մարդուն, որը ներառում էր այդ հակադրությունները. նա միաժամանակ և՛ սուրբ էր,

[12] Եզրույթը Պլատոնի «Խնջույք»-ից է վերցված։ Տե՛ս Платон, Пир, РИПОЛ классик, М., 2019.

և՛ սատանա, հոգևոր էակ էր՝ դեպի հավերժություն ուղղված անդրանձնական…, ինչը նրան դարձնում էր ազնվական, և միաժամանակ սահմանափակված էր բնազդներով առաջնորդվող մարմնի հոգսերով, որոնք տառապանքներ են հարուցում: Սակայն մարդուն շատ դժվար է միաժամանակ լինել սուրբ և սատանա, այդ իսկ պատճառով մոդեռնը փորձում էր հաստատել մեկը և մերժել մյուսը կամ որոշակի շրջան անցնել որպես սուրբ, հետո՝ որպես սատանա: Պայքարը սրբի և գազանի միջև երկար տևեց՝ դրսևորվելով մշակույթի, փիլիսոփայության, գրականության, սոցիալական հարաբերությունների և արժևորումների մեջ: Մոդեռնը հռչակեց «Աստծո մահը»՝ փորձելով ազատվել անդրանձնական (այնկողմնային) հոգևորից՝ սրբից՝ հռչակելով նյութականի՝ սատանայի գերիշխանությունը: Մոդեռնի գիտակցության ընդունում էր, որ տեխնիկական միջոցների կիրառմամբ հնարավոր է բացահայտել բացարձակ և համընդհանուր ճշմարտությունը: Այդպիսի բացարձակ ճշմարտության և ռացիոնալության գերիշխանությունը հանգեցրեց աղետալի իրադարձությունների՝ երկու համաշխարհային պատերազմ, ցեղասպանություններ, ատոմային ռումբ և այլն: Հետմոդեռնի առաջին տեսաբանները՝ Չարլզ Ջենքսը, Ժան-Ֆրանսուա Լիոտարը, Իբն Հասանը, վերլուծության են ենթարկում համապատասխան մշակութային ֆենոմենները՝ նյութական կեցության վերափոխումները, անվստահությունը և հետագա հրաժարումը մետանարատիվներից, ուշ կապիտալիզմի ձևավորումը, պատմականության սպառումը, արվեստում նոր ռեժիմի ձևավորումը[13]: Ավելի ընդհանրական կարելի է ասել, որ հետմոդեռնը մոդեռնի հակադրության դրսևորումն է մոդեռնի ուտոպիաներին, գծային զարգացմանը, մեծ նարատիվներին, բանականությանը:

Մետամոդեռնի դարաշրջանը փոխեց այդ ամենը և հրաժարվեց հետմոդեռնի «կյանքը ամբողջությամբ խաղ է» կարգախոսից: Մարդիկ ոչ միայն ապրում և գործում են ժամանակակից թվային տեխնոլոգիաների ստեղծած աշխարհում, այլ նաև այդ իրականության համահեղինակներն են: Անհատի կյանքը թվային իրականության մի մասն է, իրողությունը: Ինտերակտիվ միջավայրը պահանջում է շփման նոր սկզբունքներ, ազատ երկխոսություն, որը իր հերթին ենթադրում է ինտելեկտուալ հանդուրժողականություն, փոխըմբռնում, բարություն, այլ ոչ թե կեղծ հարաբերություններ և խաղ: Հանրույթը կրկին հետաքրքրություն է ցուցաբերում կորուսյալ արժեքների հանդեպ, ավելի հաճախ նկատվում են նախատիպերի հարգալի, այլ ոչ թե հեգնական հղումներ, ռոմանտիզմ և հույս դեպի ապագան: Պատմությունը շարժ-

[13] Տե՛ս **C. Jencks,** The Language of Post-Modern Architecture (London: Academy Editions, 1991); **J. F. Lyotard**, The Postmodern Condition: A Report on Knowledge (Manchester: Manchester University Press, 1984); **F. Jameson**, Postmodernism, or, The Cultural Logic of Late Capitalism (Durham: Duke University Press, 1991); **I. Hassan**, The Postmodern Turn: Essays on Postmodernism and Culture (Columbus: Ohio State University Press, 1987), էջ 37:

վեց և անցավ առաջ՝ հռչակված «պատմության ավարտից» այն կողմ: Ավելին՝ պատմությունը երբեք չավարտվեց: Հետմոդեռնի հռչակած այդ ավարտը Հեգելի իդեալիստական տեսությանն էր վերաբերում: Այդ տեսության համաձայն՝ մարդկության ողջ ընթացքը և զարգացումը ունեն նպատակ՝ «Telos», որը ազատական-ժողովրդավարական հասարակությունն էր: Կարելի է ասել, որ պատմությունը ավարտվեց, քանի որ մարդկությունը հասկացավ այդ նպատակին հասնելու անհնարինությունը: Մետամոդեռնը ևս գիտակցում է, որ պատմության նպատակը անհնարին է, այն գոյություն չունի: Սակայն ոգեշնչված մոդեռնի միամտությամբ և հետմոդեռնի սկեպտիցիզմով՝ մետամոդեռնը առաջնորդվում է «իբրև թե» (as if) սկզբունքով, անհնարինի հնարավոր լինելու մոտեցմամբ: Եթե մոդեռնը և հետմոդեռնը հիմնվում էին Հեգելի բացարձակ իդեալիզմի վրա, ապա մետամոդեռնը ավելի շուտ բխեցվում է Կանտի «բացասական» իդեալիզմից, քանի որ Կանտի պատմության փիլիսոփայությունը հիմնվում է «իբրև այդպես» մոտեցման վրա: Ինչպես նշում է Քյուրտիս Պիտերսը, «համաձայն Կանտի՝ մենք կարող ենք դիտարկել մարդկության պատմությունը. ասես մարդկությունը ունի կյանքի նարատիվ, որը նկարագրում է ինքն իր ընթացքը դեպի ամբողջական բանականացում...դիտարկել պատմությունը, ասես այն մարդկանց զարգացման պատմությունն է»[14]:

Հետմոդեռնը շեշտը դրեց ճշմարտության պլյուրալիստական ըմբռնման վրա: Պատմության ողջ ժառանգությունը հետմոդեռնի իրավիճակը ենթարկեց ապակառուցման, հեգնանքի, պատճենահանման: Ժակ Բոդրիյարը այդ գործընթացը բնորոշեց որպես սիմուլյակրների՝ պատճենների պատճենների իրականության կառուցում: Հետմոդեռնը մերժեց բացարձակ և համընդհանուր ճշմարտությունը: Ամեն ինչ դրվեց կասկածի տակ. «Աստված ոչ թե մեռել է, այլ դարձել է Անհնարին: Վթարային դատարկություն է»[15]: Պատահական չէ, որ Ֆուկույամա հայտարարեց՝ հետմոդեռնի ձևավորած ազատական ժողովրդավարությունը հանգեցնում է մարդկության առաջընթացի ավարտին՝ «պատմության ավարտին»: Հետմոդեռնը որպես կեցության տարբեր կողմերը բնութագրող փիլիսոփայական հարացույց և որպես մշակութային իրավիճակ, փակուղու մեջ հայտնվեց: Մոդեռնի մեծ նարատիվները, իրենց համընդհանրությամբ ու լայնածավալությամբ (կոմունիզմ, ֆաշիզմ), տապալվեցին: Կրոնի՝ հատկապես քրիստոնեության ճգնաժամը, ստեղծեց դատարկություն մարդու հուզական և հոգևոր աշխարհում: Ումբերտո Էկոն իր հայտնի «Վարդի անունն» ստեղծագործության լուսանցքներում նշում է, որ «յուրաքանչյուր դարաշրջան ունի իր հետմոդեռնը, դարաշրջանի ռեալիզմը հանգեցնում է ճգնաժամի, անցյալը ճնշում է, ծանրացնում, ահաբեկում է: Պատմական ավանգարդը

[14] **C. Peters**, Kant's Philosophy of Hope (New York: Peter Lang, 1993), p. 117.

[15] **Է. Հարությունյան,** Մարդկային կեցության այլակերպումները, Եր., 2018, էջ 3:

(մոդեռնը) փորձում է հրաժարվել անցյալից... Ավանգարդը փլուզում է, ձևափոխում անցյալը, հասցնում է վերացարկման, տձևության, մաքուր կտավի: Բայց հասնելով սահմանին՝ ավանգարդը այլևս գնալու տեղ չունի: Դրան հաջորդելու է գալիս հետմոդեռնը, քանի որ անցյալը անհնարին է ոչնչացնել, այն պետք է հեգնանքով, առանց ատելության վերաիմաստավորել»[16]:

Այս ամենի արդյունքում, որպես կողմնակի հետևանք, տարածվեցին օտարվածությունը, հետընթացը, կյանքի հանդեպ սպառողական վերաբերմունքը, որոնք իրենց հերթին «պատմության ավարտի» համընդհանուր զգացողություն ձևավորեցին: Փիլիսոփայությունը, արվեստը, մշակույթը այդ փակուղում հայտնվելով՝ «նոր ոչինչ» չէին տեսնում: Հետմոդեռնը դատարկության մատնեց և՛ Նպատակը, և՛ դրան հասնելու միջոցները: Մետամոդեռնի գիտակցությունը առաջարկում է Նպատակ, որը տարբեր կրոններից և համակարգերից անդին է, որը հաստատուն է, բայց այն գտնելու պատասխանատվությունը անհատն է կրում: Խոսքը անհատականության, հոգևոր մտավորականության, ստեղծագործական բարոյականության, անձնական անկեղծության մասին է շատ են անդրադարձել Բերդյաևը և Զինովևը: Մետամոդեռնը նշում է նաև Նպատակին հասնելու միջոցները: Նպատակը անհատական հոգևոր աճն է, բացարձակին հասնելն ու հասկանալը, բարու և չարից անդին լինելը, «դատողության դատարանի շենքից» դուրս գալը:

«Պատմության ավարտից» անցանք մետամոդեռնի, որը, ըստ Թիմոթեուս Վերմեուլենի և Ռոբին վան դեն Ակկերի, զգայության կառույց է: Երբ մարդը աշխարհը ճանաչում է որոշակի իմացաբանական մոդելի շրջանակներում, այն սահմանափակվում է: Մետամոդեռնը վեր է նման սահմանափակումներից:

Հեգելի փիլիսոփայությունից հետո աշխարհի համընդհանուր ըմբռնումը տրոհվեց բազմաթիվ գիտակարգերի, որոնցից յուրաքանչյուրը ուսումնասիրում է իրականության որոշակի հատված: Մետամոդեռնը մեզ վերադարձնում է աշխարհը ճանաչելու համընդհանուր հոսքին, որտեղ կարևորություն ունի յուրաքանչյուր մաս:

Մետամոդեռնը արտահայտում է մարդու անկայուն և դուալիստական բնույթը՝ «ասոցիացիան» (Զիմելի տերմինաբանությամբ): Նա նշում է, որ մարդը ճոճանակ է, որը անդադար տատանվում է երկու ծայրամասերի միջև, ձգտում է հավասարակշռության, որին այդպես էլ չի հասնում:

Մետամոդեռնը համաշխարհային սոցիոմշակութային գործընթաց է, որի առանձնահատկությունն են երկու հակադրությունների (մոռեդն, հետմոդեռն) միջև տատանումները (ասցիլյացիա) և դրանց միաժամանակյա կիրառումը: Այստեղ չկա որոշակի դիրք զբաղեցնելու մե-

[16] **Эко У.** Заметки на полях «Имени розы». СПб.: Астрель, 2011, с. 54.

խանիզմ. աշխարհը և մշակույթը ընկալվում են որպես իմաստների մի ամբողջական հոսք, որոնք ընդհանուր ճշմարտության տարրերն են, շատ կարևոր են և ինքնաբավ: Մետամոդեռնի հիմնարար սկզբունքը տատանումն է, որն էլ բազմաթիվ քննադատությունների է ենթարկվում: Հարկ է նշել, որ մետամոդեռնը ոչ թե միավորում է հակադրությունները, այլ դրանց միջև ընտրություն կատարելու դինամիկ ուղի է: Մարդկությունը հոգնել է մոդեռնի ծայրահեղություններից, հետմոդեռնի անկայունությունից, ապագան կարիք ունի որոշակիության, մարդկությունը կարիք ունի ճշմարտության, անկեղծության: Հետմոդեռնիստը մեզ բազմաթիվ փաստեր կբերեր ու կփորձեր ապացուցել, որ դա ևս մեկ անգամ կհանգեցնի հիասթափության, օտարվածության, մասնատման, ապակառուցողականության: Սակայն հետմոդեռնի հարաբերապաշտությունը չի կարող երկար տևել: Իհարկե, մետամոդեռնը չի տալիս պատրաստի լուծումներ, բայց այն որոշակի նպատակ ունի: Մետամոդեռնի նպատակն է երկար ու բարդ ճանապարհ անցնելուց հետո գտնել պատասխանները, հասկանալ, օրինակ, թե ինչ տեղի ունեցավ մարդու հետ սիմուլյակրների դարաշրջանում, նրա հոգու և կեցության այլակերպումները ինչ հետևանքների հանգեցրին, անհատի կյանքի իմաստը և ողջ կեցության ընթացքի վերաբերյալ հարցերը կարող են ունենալ պատասխան, թե ոչ: Մետամոդեռնը իրոք հետապնդում է «հեռացող հորիզոններին» հասնելու հույսը: Վերմյուլենի ու Ակկերի խոսքերով. «...ներդաշնակությունը ժամանակակից մշակույթի գլխավոր զգացողությունը չէ: Մենք պնդում ենք, որ ներդաշնակության փոխարեն գերիշխում է անհամատեղելիության ընկալումը, մեկը մյուսին հակասելու գիտակցումը, նույնիսկ եթե դրանց միավորման անհրաժեշտություն կա: Մետամոդեռնը արմատական, վճռական կասկածի դրսևորման մի փուլ է, այն անդադար շարժում է, տատանում հակադրությունների միջև»[17]:

Ժամանակակից սոցիումը կարծես մի հսկայական տեղեկատվական մայրուղի լինի, XXI դարի ողջ մշակույթը վիթխարի գետ է, որի ջրերը հոսում են շատ արագ: Այս նոր հանրույթները և նրանց ընկալումները նման չեն մոդեռնի էկլեկտիկային կամ հետմոդեռնի ռիզոմային, դրանք տեղեկատվական հոսքեր են, ընթացքների ամբողջություն: Մարդն այդ իրավիճակում կարիք ունի իր մտածողությունն ընդլայնելու, փնտրելու և գտնելու ուղիներ: Եվ այդ բարդ ճանապարհը նա անցնում է ինքնուրույն, առանց հաստատված գաղափարախոսությունների, մեծ նարատիվների, տոտալիտար գիտական տեսությունների:

Այսպիսով, մետամոդեռնը չի առաջարկում վերջնական, պատրաստի գաղափար կամ հայեցակարգ, այլ առաջարկում է գտնել այն՝

[17] http://www.emerymartin.net/FE503/Week10/Notes%20on%20Metamodernism.pdf?fbclid=IwAR1KXlToxqssv8o_8Dm7TVninoj9nd6YRf3JdLTE0VzG96MmU0gHWNqgaxc, URL: http://www.lib.ru/FILOSOF/BEKON/nauka2.txt. https://www.kritika24.ru/page.php?id=39544 (դիտումը՝ 04.06.2019):

ինքնուրույն, տատանվելով տարբեր այլընտրանքների միջև, ընկալել աշխարհը այնպիսի զգայության կառուցվածքի միջոցով, որը ազատում է գաղափարական կախվածություններից: Մարդուն այլևս պետք չեն լինի մեծ նարատիվներ, հետևաբար բավականին բարդ կլինի նրան մանիպուլյացիայի ենթարկել:

Բանալի բառեր – *մետամոդեռն, հետմոդեռն, տատանում, այլընտրանք, կապիտալիզմ, պատմության ավարտ*

РОЗА НЕМИШАЛЯН – *Метамодерн как продолжение “конца истории”.* – В каком мире мы живём? После трагических событий 11 сентября 2001 года мир изменился, началась новая эпоха, где подверглись кардинальным изменениям культура, социальный, экономический, технологический и политический подтексты осмысления сущности человека. Многие учёные и мыслители согласны в вопросе о конце эпохи постмодерна. Некоторые утверждают, что постмодерн пришел к внезапному завершению вследствие материальных событий: изменения климата, финансового кризиса, террористических атак и цифровой революции. Однако в вопросе о том, какая эпоха наступила, единого подхода нет. Некоторые называют современность гипермодерном, другие автомодерном, альтермодерном и т.д. В 2010 году голландцы Т. Вермюлен и Р. ван ден Аккер опубликовали статью “Заметки о метамодерне”, в которой современная социокультурная реальность описана как метамодерн, отличительной чертой которого является колебание.

Ключевые слова: *метамодерн, постмодерн, колебание, альтернатива, капитализм, конец истории*

ROZA NEMISHALYAN – *Metamodernism as Alternative to the “End of History”.* – What kind of world do we live in? Since the tragic events of September 11, 2001, the world has changed, a new era has begun, where the cultural, social, economic, technological, political implications of understanding the essence of man changed. Many scientists and thinkers agree with the issue of the end of the post-modern era. Some of them say that post-modern has led to a sudden end due to tangible events of climate change, financial crisis, terrorist attacks, and the digital revolution. However, there is no single answer to the question of what era has come. Some call the contemporary world hypermodern, others auto modern, alter-modern, etc. In 2010 Dutch Timotheus Vermeulen and Robin van den Akken published an article “Notes on Metamodernism”, in which they described modern reality as metamodern, the distinguishing feature of which is oscillation.

Key words: *metamodern, postmodern, capitalism, oscillation, alternative, end of history*

Ներկայացվել է՝ 03.10.2019
Գրախոսվել է՝ 21.10.2019
Ընդունվել է տպագրության՝ 28.11.2019